3	Հետբուհական լրացուցիչ կրթության վարչություն	<b>550.0</b>	308.60	241.40	150.0	173.80	(23.80)	400.0	134.80	265.20
4	Մինչհամալսարանական կրթության վարչություն	<b>700.0</b>	418.99	281.01	500.0	383.59	116.41	200.0	35.49	164.51
5	SS կրթական և հետազոտական կենտրոն	<b>1,000.0</b>	1,639.82	(639.82)	500.0	132.62	367.38	500.0	1,507.20	(1,007.20)
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>		<b>4,200.0</b>	<b>3,575.70</b>	<b>624.30</b>	<b>2,000.0</b>	<b>1,693.61</b>	<b>306.39</b>	<b>2,200.00</b>	<b>1,882.09</b>	<b>317.91</b>

**Երևանի պետական համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների 2015թ. տարեկան կատարողական  
(դրամական միջոցների ելքեր)**

*Կառուցվածքային ստորաբաժանումների անմիջական ղեկավար՝ պրոռեկտոր գիտական  
քաղաքականության և միջազգային համագործակցության գծով Գ.Գ. Գևորգյան*

No	ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ	ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ հազար դրամ			ԱՅԴ ԹՎՈՒՄ					
					ԸՆԹԱՑԻԿ (ԳՐԱՍԵՆՑԱԿԱՅԻՆ) ԾԱԽՍԵՐ			ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԾԱԽՍԵՐ		
		ՏԱՐԵԿԱՆ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՑՈՒՑԱՆԻՇ	ԸՆԴ. ԾԱԽՍ	ՄՆԱՑՈՐԴ	ՏԱՐԵԿԱՆ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՑՈՒՑԱՆԻՇ	ԸՆԴ. ԾԱԽՍ	ՄՆԱՑՈՐԴ	ՏԱՐԵԿԱՆ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՑՈՒՑԱՆԻՇ	ԸՆԴ. ԾԱԽՍ	ՄՆԱՑՈՐԴ
1	Գիտակազմակերպական բաժին	<b>1,000.00</b>	563.7	436.3	400.0	509.5	(109.5)	600.0	54.2	545.8
2	Միջազգային համագործակցության վարչություն	<b>800.00</b>	768.0	32.0	550.0	480.3	69.7	250.0	287.7	(37.7)
3	Ասպիրանտուրայի և դոկտորատուրայի բաժին	<b>250.00</b>	70.1	179.9	150.0	49.3	100.7	100.0	20.8	79.2
4	«Գիտական տեղեկագիր» հանդեսի խմբագրություն	<b>500.00</b>	-	500.0	200.0	-	200.0	300.0	-	300.0
5	ԵՊՀ աստղադիտարան	<b>2,100.00</b>	2,234.8	(134.8)	100.0	55.8	44.2	2,000.0	2,179.0	(179.0)
6	«Բանբեր» հանդեսի խմբագրություն	<b>2,650.00</b>	2,793.5	(143.5)	100.0	86.9	13.1	2,550.0	2,706.6	(156.6)
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>		<b>7,300.00</b>	<b>6,430.1</b>	<b>869.9</b>	<b>1,500.0</b>	<b>1,181.8</b>	<b>318.2</b>	<b>5,800.0</b>	<b>5,248.3</b>	<b>551.7</b>

**Երևանի պետական համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների 2015թ. տարեկան կատարողական**  
(դրամական միջոցների ելքեր)

*Կառուցվածքային ստորաբաժանումների անմիջական ղեկավար՝  
պրոռեկտոր ուսանողների, շրջանավարտների և հասարակայնության հետ  
կապերի գծով Ռ. Լ. Մարկոսյան*

No	ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ	ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ հազար դրամ			ԱՅԴ ԹՎՈՒՄ					
					ԸՆԹԱՑԻԿ (ԳՐԱՄԵՆՅԱԿԱՅԻՆ) ԾԱԽՍԵՐ			ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԾԱԽՍԵՐ		
		ՏԱՐԵԿԱՆ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՑՈՒՑԱՆԻՇ	ԸՆԴ. ԾԱԽՍ	ՄՆԱՑՈՐԴ	ՏԱՐԵԿԱՆ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՑՈՒՑԱՆԻՇ	ԸՆԴ. ԾԱԽՍ	ՄՆԱՑՈՐԴ	ՏԱՐԵԿԱՆ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՑՈՒՑԱՆԻՇ	ԸՆԴ. ԾԱԽՍ	ՄՆԱՑՈՐԴ
1	Հասարակության հետ կապերի և լրատվության վարչություն	<b>1,500.00</b>	1,493.29	6.71	600.00	612.77	(12.77)	900.00	880.52	19.48
2	Մշակույթի կենտրոն	<b>250.00</b>	307.90	(57.90)	100.00	106.10	(6.10)	150.00	201.80	(51.80)
3	Շրջանավարտների և կարիերայի կենտրոն	<b>250.00</b>	194.00	56.00	150.00	140.20	9.80	100.00	53.80	46.20
4	Պատմության թանգարան	<b>600.00</b>	2,077.60	(1,477.60)	200.00	198.40	1.60	400.00	1,879.20	(1,479.20)
5	Ուսանողների հետ տարվող աշխատանքների բաժին	<b>300.00</b>	468.56	(168.56)	100.00	106.20	(6.20)	200.00	362.36	(162.36)
6	Տեղեկատվական համակարգերի սպասարկման և զարգացման վարչություն	<b>450.00</b>	291.27	158.73	250.00	121.37	128.63	200.00	169.90	30.10
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>		<b>3,350.00</b>	<b>4,832.53</b>	<b>(1,482.53)</b>	<b>1,400.00</b>	<b>1,285.05</b>	<b>114.95</b>	<b>1,950.00</b>	<b>3,547.48</b>	<b>(1,597.48)</b>



**Երևանի պետական համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների 2015թ. տարեկան կատարողական**  
(դրամական միջոցների ելքեր)

*Կառուցվածքային ստորաբաժանումների անմիջական ղեկավար՝  
պրոռեկտոր ընդհանուր հարցերի գծով Ա.Յ. Մալխասյան*

No	ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ	ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ հազար դրամ			ԱՅԴ ԹՎՈՒՄ					
					ԸՆԹԱՑԻԿ (ԳՐԱՄԵՆՅԱԿԱՅԻՆ) ԾԱԽՍԵՐ			ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՆՔԲԵՐՄԱՆ ԾԱԽՍԵՐ		
		ՏԱՐԵԿԱՆ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՑՈՒՑԱՆԻՇ	ԸՆԴ. ԾԱԽՍ	ՄՆԱՑՈՐԴ	ՏԱՐԵԿԱՆ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՑՈՒՑԱՆԻՇ	ԸՆԴ. ԾԱԽՍ	ՄՆԱՑՈՐԴ	ՏԱՐԵԿԱՆ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՑՈՒՑԱՆԻՇ	ԸՆԴ. ԾԱԽՍ	ՄՆԱՑՈՐԴ
1	Տնտեսական գործունեության կազմակերպման և վերահսկման բաժին	<b>31,000.0</b>	20,341.3	10,658.7	27,700.0	18,280.9	9,419.1	3,300.0	2,060.3	1,239.7
1.1	Տնտեսական մաս	<b>2,000.0</b>	1,626.3	373.7	1,000.0	636.3	363.7	1,000.0	990.0	10.0
1.2	Կենտրոնական մասնաշենք	<b>3,000.0</b>	3,606.4	(606.4)	2,800.0	3,079.6	(279.6)	200.0	526.8	(326.8)
1.3	No 1-2 ուսումնական մասնաշենք	<b>3,000.0</b>	2,393.8	606.2	2,800.0	2,321.8	478.2	200.0	72.0	128.0
1.4	No 3-4 ուսումնական մասնաշենք	<b>3,000.0</b>	2,969.2	30.8	2,800.0	2,800.0	-	200.0	169.2	30.8
1.5	No 5 ուսումնական մասնաշենք	<b>2,500.0</b>	1,175.5	1,324.5	2,300.0	1,175.5	1,124.5	200.0	-	200.0
1.6	No 6 ուսումնական մասնաշենք	<b>3,000.0</b>	1,045.2	1,954.8	2,800.0	1,045.2	1,754.8	200.0	-	200.0
1.7	No 7 ուսումնական մասնաշենք	<b>3,000.0</b>	1,232.9	1,767.1	2,800.0	1,232.9	1,567.1	200.0	-	200.0
1.8	No 8 ուսումնական մասնաշենք	<b>3,000.0</b>	2,920.2	79.8	2,800.0	2,800.4	(0.4)	200.0	119.7	80.3
1.9	Միջազգային կրթական կենտրոն	<b>2,500.0</b>	134.6	2,365.4	2,300.0	134.6	2,165.4	200.0	-	200.0
1.10	Մարզահամալիր	<b>2,200.0</b>	784.9	1,415.1	2,000.0	784.9	1,215.1	200.0	-	200.0
1.11	Աստղադիտարան	<b>400.0</b>	403.0	(3.0)	300.0	303.0	(3.0)	100.0	100.0	-
1.12	Կաթսայատուն	<b>1,200.0</b>	1,088.9	111.1	1,000.0	1,006.3	(6.3)	200.0	82.6	117.4
1.13	Կիլյան 1ա մասնաշենք	<b>2,200.0</b>	960.4	1,239.6	2,000.0	960.4	1,039.6	200.0	-	200.0
2	Տարածքի կանաչապատման բաժին	<b>800.0</b>	1,249.0	(449.0)	500.0	987.6	(487.6)	300.0	261.3	38.7

3	Հակահրդեհային ծառայություն	350.0	293.1	56.9	50.0	8.2	41.8	300.0	284.9	15.1
4	Էլ.էներգիայի շահագործման բաժին	500.0	427.8	72.2	100.0	27.8	72.2	400.0	400.0	-
5	Ավտոպարկ	450.0	481.8	(31.8)	50.0	48.7	1.3	400.0	433.1	(33.1)
6	Հեռախոսակայան	100.0	39.0	61.0	50.0	39.0	11.0	50.0	-	50.0
7	Մեխանիկական արհեստանոց	200.0	263.1	(63.1)	50.0	113.1	(63.1)	150.0	150.0	-
8	Բուժկետ	250.0	-	250.0	250.0	-	250.0	-	-	-
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>		<b>33,650.0</b>	<b>23,095.1</b>	<b>10,554.9</b>	<b>28,750.0</b>	<b>19,505.3</b>	<b>9,244.7</b>	<b>4,900.0</b>	<b>3,589.6</b>	<b>1,310.4</b>

Հ/Հ	Ծախսեր	Կատարողական
		Գումար (հազար դրամ)
<b>ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի մասով</b>		<b>97,641.0</b>
<i>այդ թվում՝</i>		
1.1	Ուսանողական նպաստի ծախսեր	77,350.0
1.2	Արտոնություն ունեցող ուսանողների ուսման վարձի լրիվ փոխհատուցման ծախսեր	4,415.0
1.3	Մոցիալական անապահով ուսանողների ուսման վարձերի մասնակի փոխհատուցման ծախսեր	7,876.0
1.4	Կրթաթոշակ իծախսեր	8,000.0

7. 2015թ. ԵԿԱՍՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԸ ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ  
ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ

- ԵՊՀ ՀՅՈՒՐԵՐԻ ՏՈՒՆ
- ԵՊՀ ԾԱՂԿԱԶՈՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԲԱԶԱ
- ԵՊՀ ՀԱՆՔԱՎԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԲԱԶԱ
- ԵՊՀ ԲՅՈՒՐԱԿԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԲԱԶԱ
- ԵՊՀ ԴԻԼԻՉԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԲԱԶԱ
- ԵՊՀ ԱՏԱՄՆԱԲՈՒԺԱՐԱՆ

**ԵՊՀ ՀՅՈՒՐԵՐԻ ՏՈՒՆ**

(դրամական միջոցների մուտքեր և ելքեր)

Գումարը հազար դրամներով

Հ/Հ	Կառուցվածքային ստորաբաժանում	Տարեկան հաստատված ցուցանիշ	Կատարողական	Մնացորդ
1	Եկամուտներ՝ ներառյալ ԱԱՀ	57,000.0	34,763.0	22,237.0
	ԱԱՀ	9,500.0	5,666.0	3,834.0
	Զուտ եկամուտ	47,500.0	29,097.0	18,530.8
2	Ծախսեր	51,800.0	33,739.5	18,060.5
<i>այդ թվում՝</i>				
2.1	Ընթացիկ ծախսեր	51,300.0	33,739.5	17,560.5
<i>այդ թվում՝</i>				
2.1.1	Աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցներ	29,000.0	22,190.2	6,809.8
2.1.2	Կոմունալ վճարների ծախսեր	18,000.0	7,689.3	10,310.7
2.1.3	Փոստի և կապի վճարման ծախսեր	1,000.0	787.2	212.8
2.1.4	Գրասենյակային ծախսեր	80.0	65.1	14.9
2.1.5	Ապրանքանյութական պաշարների ձեռքբերման ծախսեր	2,720.0	1,890.4	829.6
2.1.6	Ծառայությունների ձեռքբերման ծախսեր	500.0	1,117.3	(617.3)
2.2	Ոչ ընթացիկ ծախսեր	500.0	0.0	500.0
<i>այդ թվում՝</i>				
2.2.1	Ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերման ծախսեր	500.0	0.0	500.0

**ԵՊՀ ԾԱՂԿԱԶՈՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԲԱԶԱ**

(դրամական միջոցների մուտքեր և ելքեր)

Գումարը հազար դրամներով

Հ/Հ	Կառուցվածքային ստորաբաժանում	Տարեկան հաստատված ցուցանիշ	Կատարողական	Մնացորդ
1	Եկամուտներ՝ ներառյալ ԱԱՀ	57,000.0	41,950.0	15,050.0
	ԱԱՀ	9,500.0	6,575.0	2,925.0
	Զուտ եկամուտ	47,500.0	35,375.0	12,125.0
2	Ծախսեր	75,000.0	88,148.10	(13,148.10)
<i>այդ թվում՝</i>				
2.1	Ընթացիկ ծախսեր	75,000.0	88,148.10	(13,148.10)
<i>այդ թվում՝</i>				
2.1.1	Աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցներ	31,000.00	32,746.60	(1,746.60)
2.1.2	Կոմունալ վճարների ծախսեր	17,650.00	18,173.00	(523.00)
2.1.3	Փոստի և կապի վճարման ծախսեր	350.00	222.4	127.6
2.1.4	Մննդի ծախսեր	23,500.00	28,422.10	(4,922.10)
2.1.5	Ապրանքանյութական պաշարների ձեռքբերման ծախսեր	2,500.00	8,584.00	(6,084.00)

**ԵՊՀ ՀԱՆՔԱՎԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԲԱԶԱ**

(դրամական միջոցների մուտքեր և ելքեր)

*Գումարը հազար դրամներով*

Հ/Հ	Կառուցվածքային ստորաբաժանում	Տարեկան հաստատված ցուցանիշ	Կատարողական	Մնացորդ
1	Եկամուտներ՝ ներառյալ ԱԱՀ			
	ԱԱՀ			
	Զուտ եկամուտ			
2	Ծախսեր	9,000.0	7,273.7	1,726.3
<i>այդ թվում՝</i>				
2.1	Ընթացիկ ծախսեր	9,000.0	7,273.7	1,726.3
<i>այդ թվում՝</i>				
2.1.1	Աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցներ	6,400.0	6,400.0	0.0
2.1.2	Կոմունալ վճարների ծախսեր	2,000.0	401.7	1,598.3
2.1.3	Ապրանքանյութական պաշարների ձեռքբերման ծախսեր	600.0	472.0	128.0

**ԵՊՀ ԲՅՈՒՐԱԿԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԲԱԶԱ**

(դրամական միջոցների մուտքեր և ելքեր)

*Գումարը հազար դրամներով*

Հ/Հ	Կառուցվածքային ստորաբաժանում	Տարեկան հաստատված ցուցանիշ	Կատարողական	Մնացորդ
1	Եկամուտներ՝ ներառյալ ԱԱՀ			
	ԱԱՀ			
	Զուտ եկամուտ			
2	Ծախսեր	8,000.0	6,364.4	1,635.6
<i>այդ թվում՝</i>				
2.1	Ընթացիկ ծախսեր	8,000.0	6,364.4	1,635.6
<i>այդ թվում՝</i>				
2.1.1	Աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցներ	5,200.0	5,200.0	0.0
2.1.2	Կոմունալ վճարների ծախսեր	2,000.0	338.0	1,662.0
2.1.3	Ապրանքանյութական պաշարների ձեռքբերման ծախսեր	800.0	826.4	(26.4)

**ԵՊՀ ԴԻԼԻՋԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԲԱԶԱ**

(դրամական միջոցների մուտքեր և ելքեր)

*Գումարը հազար դրամներով*

Հ/Հ	Կառուցվածքային ստորաբաժանում	Տարեկան հաստատված ցուցանիշ	Կատարողական	Մնացորդ
1	Եկամուտներ՝ ներառյալ ԱԱՀ			
	ԱԱՀ			
	Զուտ եկամուտ			
2	Ծախսեր	5,500.0	4,485.6	1,014.4
<i>այդ թվում՝</i>				
2.1	Ընթացիկ ծախսեր	5,500.0	4,485.6	1,014.4
<i>այդ թվում՝</i>				
2.1.1	Աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցներ	4,200.0	4,185.6	14.4
2.1.2	Կոմունալ վճարների ծախսեր	500.0	300.0	200.0
2.1.3	Ապրանքանյութական պաշարների ձեռքբերման ծախսեր	800.0	0.0	800.0

**ԵՊՀ ԱՏԱՄՆԱԲՈՒԺԱՐԱՆ**

(դրամական միջոցների մուտքեր և ելքեր)

*Գումարը հազար դրամներով*

Հ/Հ	Կառուցվածքային ստորաբաժանում	Տարեկան հաստատված ցուցանիշ	Կատարողական	Մնացորդ
1	Եկամուտներ	15,000.0	12,652.0	2,348.0
2	Ծախսեր	15,000.0	13,405.9	1,594.1
<i>այդ թվում՝</i>				
2.1	Ընթացիկ ծախսեր	15,000.0	13,405.9	1,594.1
<i>այդ թվում՝</i>				
2.1.1	Աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցներ	10,500.0	9,073.9	1,426.1
2.1.2	Տուրք և արտոնագրավճար	3,200.0	3,126.0	74.0
2.1.3	Կոմունալ վճարների ծախսեր	300.0	300.0	0.0
2.1.4	Ապրանքանյութական պաշարների ձեռքբերման ծախսեր	750.0	905.4	(155.4)
2.1.5	Ծառայությունների ձեռքբերման ծախսեր	250.0	0.0	250.0

8. 2015թ. ԼՐԱՑՈՒՑԻՉ ԿՐԹԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԵԿԱՍՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ  
ՆԱԽԱՀԱՇԻՎՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ

- ՄԱՍ ՄԵԴԻԱ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
- ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ
- ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ
- ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՎԱՍՏԱԳՐՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ (ITEP)
- ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ
- «ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ (HR)» ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԾՐԱԳԻՐ
- «ՀԱՍԱՐԱԿԱՑՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐ (PR)» ԴԱՍԸՆԹԱՑ
- «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ» ԴԱՍԸՆԹԱՑ
- «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ» ԴԱՍԸՆԹԱՑ

**ՄԱՍ ՄԵԴԻԱ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ**

(ղրամական միջոցների մուտքեր և ելքեր)

*Գումարը հազար դրամներով*

Հ/Հ	Կառուցվածքային ստորաբաժանում	Տարեկան հաստատված ցուցանիշ	Կատարողական	Մնացորդ
1	Եկամուտներ վճարովի ուսուցումից	23,985.0	15,363.8	8,621.2
	Եկամուտներ ֆինանսական աջակցությունից	1,917.0	16,673.0	(14,756.0)
	Ընդամենը եկամուտներ	25,902.0	32,036.8	(6,134.8)
2	Ծախսեր	25,902.0	28,674.0	(2,772.0)
<i>այդ թվում՝</i>				
2.1	Ընթացիկ ծախսեր	25,902.0	28,674.0	(2,772.0)
<i>այդ թվում՝</i>				
2.1.1	Աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցներ	25,902.0	28,674.0	(2,772.0)
<i>այդ թվում՝</i>				
2.1.1.1	Դասախոսական անձնակազմ	4,350.0	7,890.0	(3,540.00)
2.1.1.2	Վարչական անձնակազմ	16,356.0	15,597.0	759.0
2.1.1.3	Ուսումնասօժանողակ անձնակազմ	5,196.0	5,187.0	9.0

**ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ**

(ղրամական միջոցների մուտքեր և ելքեր)

*Գումարը հազար դրամներով*

Հ/Հ	Կառուցվածքային ստորաբաժանում	Տարեկան հաստատված ցուցանիշ	Կատարողական	Մնացորդ
1	Եկամուտներ՝ ներառյալ ԱԱՀ	15,000.0	17,050.40	(2,050.4)
	ԱԱՀ	2,500.0	2,841.68	(341.7)
	Զուտ եկամուտ	12,500.0	14,208.62	(1,708.6)
2	Ծախսեր	10,265.0	12,171.3	(1,906.3)
<i>այդ թվում՝</i>				
2.1	Ընթացիկ ծախսեր	10,265.0	12,171.3	(1,906.3)
<i>այդ թվում՝</i>				
2.1.1	Աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցներ	10,224.0	12,011.0	(1,787.0)
2.1.2	Տպագրական ծառայություններ	41.0	160.3	(119.3)



**ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ**  
(դրամական միջոցների մուտքեր և ելքեր)

*Գումարը հազար դրամներով*

Հ/Հ	Կառուցվածքային ստորաբաժանում	Տարեկան հաստատված ցուցանիշ	Կատարողական	Մնացորդ
1	Եկամուտներ՝ ներառյալ ԱԱՀ	3,000.0	5,145.0	(2,145.0)
	ԱԱՀ	500.0	857.5	(357.5)
	Զուտ եկամուտ	2,500.0	4,287.5	(1,787.5)
2	Ծախսեր	2,000.0	1,976.0	24.0
<i>այդ թվում՝</i>				
2.1	Ընթացիկ ծախսեր	2,000.0	1,976.0	24.0
<i>այդ թվում՝</i>				
2.1.1	Աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցներ	1,976.0	1,976.0	0.0
2.1.3	Տպագրական	24.0	0.0	24.0

**ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՎԱՍՏԱԳՐՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ (ITEP)**

(դրամական միջոցների մուտքեր և ելքեր)

*Գումարը հազար դրամներով*

Հ/Հ	Կառուցվածքային ստորաբաժանում	Տարեկան հաստատված ցուցանիշ	Կատարողական	Մնացորդ
1	Եկամուտներ՝ ներառյալ ԱԱՀ	1,350.0	0.0	1,350.0
	ԱԱՀ	225.0	0.0	225.0
	Զուտ եկամուտ	1,125.0	0.0	1,125.0
2	Ծախսեր	900.0	0.0	900.0
<i>այդ թվում՝</i>				
2.1	Ընթացիկ ծախսեր	900.0	0.0	900.0
<i>այդ թվում՝</i>				
2.1.1	Աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցներ	300.0	0.0	300.0
2.1.2	Թեստեր և հավաստագրեր	472.5	0.0	472.5
2.1.3	Փոստային ծառայություններ	42.0	0.0	42.0
2.1.4	Տպագրական ծառայություններ	85.5	0.0	85.5

**ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ**

(դրամական միջոցների մուտքեր և ելքեր)

*Գումարը հազար դրամներով*

Հ/Հ	Կառուցվածքային ստորաբաժանում	Տարեկան հաստատված ցուցանիշ	Կատարողական	Մնացորդ
1	Եկամուտներ՝ ներառյալ ԱԱՀ	9,180.0	8,323.0	857.0
	ԱԱՀ	1,530.0	1,387.2	142.8
	Զուտ եկամուտ	7,650.0	6,935.8	714.2
2	Ծախսեր	5,270.0	5,184.0	86.0
<i>այդ թվում՝</i>				
2.1	Ընթացիկ ծախսեր	5,270.0	5,184.0	86.0
<i>այդ թվում՝</i>				
2.1.1	Աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցներ	5,184.0	5,184.0	0.0
2.1.2	Կապի ծախսեր	36.0	0.0	36.0
2.1.3	Տպագրական ծառայություններ	50.0	0.0	50.0

**«ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ (HR)»**

**ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԾՐԱԳԻՐ**

(դրամական միջոցների մուտքեր և ելքեր)

*Գումարը հազար դրամներով*

Հ/Հ	Կառուցվածքային ստորաբաժանում	Տարեկան հաստատված ցուցանիշ	Կատարողական և	Մնացորդ
1	Եկամուտներ՝ ներառյալ ԱԱՀ	6,000.0	6,000.0	0.0
	ԱԱՀ	1,000.0	1,000.0	0.0
	Զուտ եկամուտ	5,000.0	5,000.0	0.0
2	Ծախսեր	3,500.0	3,500.0	0.0
<i>այդ թվում՝</i>				
2.1	Ընթացիկ ծախսեր	3,500.0	3,500.0	0.0
<i>այդ թվում՝</i>				
2.1.1	Աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցներ	3,500.0	3,500.0	0.0

**«ՀԱՍԱՐԱԿԱՑՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՂԵՐ (PR)» ԴԱՍԸՆԹԱՑ**

(դրամական միջոցների մուտքեր և ելքեր)

*Գումարը հազար դրամներով*

Հ/Հ	Կառուցվածքային ստորաբաժանում	Տարեկան հաստատված ցուցանիշ	Կատարողական	Մնացորդ
1	Եկամուտներ՝ ներառյալ ԱԱՀ	9,120.0	8,000.0	1,120.0
	ԱԱՀ	1,520.0	1,333.3	186.7
	Զուտ եկամուտ	7,600.0	6,666.7	933.3
2	Ծախսեր	6,080.0	5,572.8	507.3
<i>այդ թվում՝</i>				
2.1	Ընթացիկ ծախսեր	6,080.0	5,572.8	507.3
<i>այդ թվում՝</i>				
2.1.1	Աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցներ	6,063.0	5,557.8	505.2
2.1.2	Գրենական պիտույքների ձեռքբերում	17.0	15.0	2.0

**«ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ» ԴԱՍԸՆԹԱՑ**

(դրամական միջոցների մուտքեր և ելքեր)

*Գումարը հազար դրամներով*

Հ/Հ	Կառուցվածքային ստորաբաժանում	Տարեկան հաստատված ցուցանիշ	Կատարողական	Մնացորդ
1	Եկամուտներ՝ ներառյալ ԱԱՀ	4,080.0	4,080.0	0.0
	ԱԱՀ	680.0	680.0	0.0
	Զուտ եկամուտ	3,400.0	3,400.0	0.0
2	Ծախսեր	2,380.0	2,380.0	0.0
<i>այդ թվում՝</i>				
2.1	Ընթացիկ ծախսեր	2,380.0	2,380.0	0.0
<i>այդ թվում՝</i>				
2.1.1	Աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցներ	2,380.0	2,380.0	0.0

**«ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ» ԴԱՍԸՆԹԱՑ**  
(դրամական միջոցների մուտքեր և ելքեր)

*Գումարը հազար դրամներով*

Հ/Հ	Կառուցվածքային ստորաբաժանում	Տարեկան հաստատված ցուցանիշ	Կատարողական	Մնացորդ
1	Եկամուտներ՝ ներառյալ ԱԱՀ	2,400.0	2,400.0	0.0
	ԱԱՀ	400.0	400.0	0.0
	Զուտ եկամուտ	2,000.0	2,000.0	0.0
2	Ծախսեր	360.0	360.0	0.0
<i>այդ թվում՝</i>				
2.1	Ընթացիկ ծախսեր	360.0	360.0	0.0
<i>այդ թվում՝</i>				
2.1.1	Աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցներ	360.0	360.0	0.0

**9. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2015թ. եկամուտների և ծախսերի նախահաշիվ**

Երևանի պետական համալսարանի 2015 թվականի դրամական հոսքերը կազմելու են.

1. Եկամուտների գծով՝ **9,690,000.0** հազար դրամ:
2. Ծախսերի գծով՝ **9,690,000.0** հազար դրամ:

Հ / Հ	Հոդված	Գումարը (հազար դրամ)
1.	Դրամական միջոցների մուտքերի (եկամուտների) գծով	<b>9,690,000.0</b>
2.	Դրամական միջոցների ելքերի (ծախսերի) գծով	<b>9,690,000.0</b>

ԵՊՀ 2015 թվականի եկամուտների և ծախսերի նախահաշիվը հավասարակշռված է:

I	Դրամական միջոցների մուտքերի (եկամուտների) հոդվածներ	Գումարը (հազար դրամ)
Հ/Հ		
	<b>Ընդամենը</b>	<b>9,690,000.0</b>
	այդ թվում՝	
1.	<b>Գործառնական գործունեությունից եկամուտներ</b>	<b>8,775,000.0</b>
	այդ թվում՝	
1.1	Եկամուտներ վճարովի ուսուցման ծառայություններից	6,267,415.0
1.2	Եկամուտներ պետական բյուջեից ստացվող ֆինանսավորումներից	2,507,585.0
2.	Գործառնական այլ եկամուտներից՝ ներառյալ ԱԱՀ	290,000.0
3.	Ոչ գործառնական եկամուտներից	625,000.0

I I Հ/Հ	Դրամական միջոցների ելքերի (ծախսերի) հոդվածներ	Գումարը (հազար դրամ)
Ընդամենը		9,690,000.0
այդ թվում՝		
Ընթացիկ ծախսեր		8,837,500.0
այդ թվում՝		
1.	Աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցներ և դրան հավասարեցված վճարումների ծախսեր	6,653,000.0
2.	Կրթաթոշակի ծախսեր	219,000.0
3.	Վճարումներ պետական բյուջե	188,000.0
4.	Կոմունալ վճարների ծախսեր	328,000.0
5.	Փոստային և կապի վճարների ծախսեր	33,500.0
6.	Գրասենյակային ծախսեր	40,000.0
7.	Սպրանքանյութական պաշարների ծախսեր	151,500.0
8.	Տրանսպորտային ծախսեր	58,500.0
9.	Օտոայությունների ձեռքբերման ծախսեր	385,000.0
10.	Ներկայացուցչական ծախսեր	7,000.0
11.	Անդամավճարների ծախսեր	8,500.0
12.	Վարձակալության ծախսեր	21,500.0
13.	Գործուղման ծախսեր	168,000.0
14.	Նպատակային ֆինանսավորումների ծախսեր	205,000.0
15.	Գրադարանային ծախսեր	47,500.0
16.	ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ֆինանսավորման ծախսեր	84,000.0
17.	Այլ ծախսեր	239,500.0
Ոչ ընթացիկ ծախսեր		852,500.0
այդ թվում՝		
19.	Ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերման ծախսեր	352,500.0
20.	Հիմնանորոգման ծախսեր	500,000.0

ԵՊՀ ռեկտորի իրավասության շրջանակներում է 2015 թվականի նախահաշվի կատարման ընթացքում, անհրաժեշտության դեպքում, ելքային (ծախսային) հոդվածների միջև կատարել վերաբաշխում՝ դրանց 10 տոկոսի սահմաններում, բացի աշխատավարձի և կրթաթոշակի հոդվածներից:

**10. Ֆինանսական հաշվետվության վավերացումը**

Ֆինանսական հաշվետվությունը ստորագրվել է հրապարակման համար 2016թ. մարտի 24-ին՝ ռեկտոր Ա.Սիմոնյանի և գլխավոր հաշվապահ Ռ.Գրիգորյանի կողմից:

Ռեկտոր

Ա. Սիմոնյան

Գլխավոր հաշվապահ

Ռ. Գրիգորյան

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2015թ.

գործունեության մասին

1. Հիմնադրամի լրիվ անվանումը՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամ:
  - 1.1. Հիմնադրամի գրանցման համարը՝ 222.160.840081
  - 1.2. Գրանցման ամսաթիվը՝ 22 դեկտեմբեր 2014թ.
  - 1.3. Հիմնադրամի գտնվելու վայրը՝ ք. Երևան, Ալեք Մանուկյան 1
  - 1.4. Գործունեության հասցեներ՝ ք. Երևան, Ալեք Մանուկյան 1, ք. Երևան, Աբովյան 52 և 52ա, ք. Երևան, Կիևյան 1ա, ք. Երևան, Ծարավ Աղբյուր 55ա, ք. Երևան, Մաշտոցի 52, ք. Երևան, Ղուկասյանի այգու աստղադիտարան, ք. Երևան, Կենտրոն Էջմիածնի հին խճուղի 109, ք. Իջևան, Ուսանողական 1, ք. Իջևան, Ուսանողական 3, ք. Իջևան, Ուսանողական, հյուրատուն, ք. Իջևան, Սպանդարյան 4/40, Կոտայքի մարզ, ք. Ծաղկաձոր «Համալսարանական» ուսումնարտադրական բազա, Կոտայքի մարզ, գ. Արտավազ, ԵՊՀ ուսումնարտադրական բազա, Արագածոտնի մարզ, գ. Բյուրական, ԵՊՀ ուսումնարտադրական բազա, Տավուշի մարզ, ք. Դիլիջան, Աբովյան 9/1 և 9/2 մարզաառողջարանային ճամբար:
  - 1.5. Հեռախոս՝ (060) 710170, ֆաքս՝ (010) 555490, կայք՝ [www.y-su.am](http://www.y-su.am), էլ. փոստ՝ [rgrig@ysu.am](mailto:rgrig@ysu.am)
2. Հիմնադրամի գործադիր մարմնի ղեկավարը՝ Արամ Հրաչիկի Սիմոնյան, ամսական աշխատավարձի չափը՝ 808500 (ութ հարյուր ութ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ ներառյալ հարկերը:
3. Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամների թիվը 32 (երեսուներկու) է, որի 25 (քսանհինգ) տոկոսը կազմում են պրոֆեսորադասախոսական կազմից ընտրված անդամները, 25 (քսանհինգ) տոկոսը՝ սովորողների կողմից ընտրված անդամները, 25 (քսանհինգ) տոկոսը՝ ՀՀ վարչապետի կողմից առաջադրված պետական պաշտոն զբաղեցնող անձինք, 25 (քսանհինգ) տոկոսը՝ կրթության, գիտության, մշակույթի և տնտեսության տարբեր ոլորտների ճանաչված ներկայացուցիչներ, ինչպես նաև Հիմնադրամի հետ համագործակցող գործատուներ:
4. Աշխատակազմի ընդհանուր թիվը 31 դեկտեմբեր 2015 թվականի դրությամբ կազմել է 2900 (երկու հազար ինը հարյուր) մարդ: Աշխատավարձի գծով ծախսերը կազմել են 6,719,414,000 (վեց միլիարդ յոթ հարյուր տասնինը միլիոն չորս հարյուր տասնչորս հազար) ՀՀ դրամ: Հիմնադրամի միջոցներից և ծառայություններից օգտվել են անձնակազմի թվով 228 (երկու հարյուր քսանութ) աշխատակիցներ, իրենց ուսանող երեխաների ուսման վարձի գեղջի իրավունքից օգտվելով, որը կազմել է 54,703,500 (հիսունչորս միլիոն յոթ հարյուր երեք հազար հինգ հարյուր)



ՀՀ դրամ: Թվով 98 (իննսունութ) աշխատակիցների բացի ամենամսյա աշխատավարձից ստացել են դրամական օգնություններ և խրախուսման գումարներ, որը տարեկան կտրվածքով կազմել է 17,219,800 (տասնյոթ միլիոն երկու հարյուր տասնինը հազար ութ հարյուր) ՀՀ դրամ: Թվով 2370 (երկու հազար երեք հարյուր յոթանասուն) աշխատակիցների ստացել են բուժզննման ծառայություն:

5. Իրականացված ծրագրեր, այդ թվում.

5.1. Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթական ծրագրեր՝ իրականացվել են բակալավրի, մագիստրատուրայի և ասպիրանտուրայի կրթական աստիճաններով առկա և հեռակա ուսուցմամբ ընդհանուր 67 (վաթսույնյոթ) մասնագիտությունների գծով ՀՀ և օտարերկրյա քաղաքացիների ուսուցում:

5.2. Գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրեր՝ իրականացվել են պետական բազային (գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքների պահպանում և զարգացում), թեմատիկ, միջազգային համագործակցության, նպատակային հետազոտությունների դրամաշնորհային, ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանման, գիտական ծրագրերում ընդգրկված գիտաշխատողների աստիճանների համար հավելավճարների վճարման, գիտաժողովների և կոնֆերանսների կազմակերպման ծրագրեր:

Տեղական և միջազգային դրամաշնորհային ծրագրեր՝ իրականացվել են ուսանողական միջոցառումների կազմակերպման, ուսանողներին կրթաթոշակների տրամադրման, մասնագիտական կրթական ծրագրերի ուսուցման, ամառային դպրոցի կազմակերպման, օտարերկրյա ԲՈՒՀ-երի հետ համագործակցության, հետազոտական աշխատանքների ծրագրեր:

5.3. Վճարովի այլ ծառայություններ՝ իրականացվել են լրացուցիչ կրթական դասընթացներ, ԵՊՀ աշխատակիցների և նրանց ընտանիքի անդամների հանգստի կազմակերպման ծառայություններ Ծաղկածորի «Համալսարանական» ուսումնարտադրական բազայում, ԵՊՀ հյուրերի կեցության ապահովում հյուրերի տանը, օտարերկրյա ուսանողների կեցության ապահովում հանրակացարանում, ատամնաբուժական, մարզադահլիճների սպասարկման, փաստաթղթերի ձևակերպման, քննությունների կազմակերպման ծառայություններ, տարածքի վարձակալություններ:

5.4. Գույքի օտարում:

6. Ֆինանսական աղբյուրներ՝ իրականացված գործունեության շրջանակներում հավաքագրվել է 11,384,229,000 (տասնմեկ միլիարդ երեք հարյուր ութսունչորս միլիոն երկու հարյուր քսանինը հազար) ՀՀ դրամ, այդ թվում.

6.1. Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթական ծրագրերից- 7,929,955,000 (յոթ միլիարդ ինը հարյուր քսանինը միլիոն ինը հարյուր հիսունհինգ հազար) ՀՀ դրամ, այդ թվում.

6.1.1. Վճարովի ուսուցման ծառայություններից-6,187,534,000 (վեց միլիարդ հարյուր ութսունյոթ միլիոն հինգ հարյուր երեսունչորս հազար) ՀՀ դրամ

6.1.2. Անվճար համակարգում սովորող ուսանողների ուսման վարձի փոխհատուցման նպաստ ՀՀ պետական բյուջեի միջոցներից-1,742,421,000 (մեկ միլիարդ յոթ հարյուր քառասուներկու միլիոն չորս հարյուր քսանմեկ հազար) ՀՀ դրամ

6.2. Ուսանողներին կրթաթոշակների վճարման, գիտական և գիտատեխնիկական, կրթական և այլ համագործակցության դրամաշնորհային ծրագրեր-

- 1,720,171,000 (մեկ միլիարդ յոթ հարյուր քսան միլիոն հարյուր յոթանասունմեկ հազար) ՀՀ դրամ, այդ թվում.
- 6.2.1. ՀՀ պետական բյուջեի միջոցներից-1,267,324,000 (մեկ միլիարդ երկու հարյուր վաթսուներեք միլիոն երեք հարյուր քսանչորս հազար) ՀՀ դրամ
  - 6.2.2. Տեղական և միջազգային համագործակցության ծրագրերից-452,847,000 (չորս հարյուր հիսուներկու միլիոն ութ հարյուր քառասուներեք հազար) ՀՀ դրամ
  - 6.3. Վճարովի այլ ծառայություններից-217,455,000 (երկու հարյուր տասնյոթ միլիոն չորս հարյուր հիսունհինգ հազար) ՀՀ դրամ, այդ թվում.
    - 6.3.1. Լրացուցիչ կրթական դասընթացներից-83,456,000 (ութսուներեք միլիոն չորս հարյուր հիսունվեց հազար) ՀՀ դրամ
    - 6.3.2. Ծաղկածորի «Համալսարանական» ուսումնաարտադրական բազայի ծառայություններից-39,450,000 (երեսունհինը միլիոն չորս հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ
    - 6.3.3. Հյուրերի տան ծառայություններից-33,996,000 (երեսուներեք միլիոն ինը հարյուր իննսունվեց հազար) ՀՀ դրամ
    - 6.3.4. Հանրակացարանի ծառայություններից-1,888,000 (մեկ միլիոն ութ հարյուր ութսունուրեք հազար) ՀՀ դրամ
    - 6.3.5. Ատամնաբուժական ծառայություններից-12,652,000 (տասներկու միլիոն վեց հարյուր հիսուներկու հազար) ՀՀ դրամ
    - 6.3.6. Մարզադահլիճների ծառայություններից-2,430,000 (երկու միլիոն չորս հարյուր երեսուն հազար) ՀՀ դրամ
    - 6.3.7. Փաստաթղթերի ձևակերպման ծառայություններից-4,260,000 (չորս միլիոն երկու հարյուր վաթսու հազար) ՀՀ դրամ
    - 6.3.8. Քննությունների կազմակերպման ծառայություններից-21,141,000 (քսանմեկ միլիոն հարյուր քառասունմեկ հազար) ՀՀ դրամ
    - 6.3.9. Տարածքի վարձակալության ծառայություններից-11,417,000 (տասնմեկ միլիոն չորս հարյուր տասնյոթ հազար) ՀՀ դրամ
    - 6.3.10. Սպասարկման և այլ ծառայություններից-6,765,000 (վեց միլիոն յոթ հարյուր վաթսուհինգ հազար) ՀՀ դրամ
  - 6.4. Գույքի օտարումից-1,344,050,000 (մեկ միլիարդ երեք հարյուր քառասունչորս միլիոն հիսուն հազար) ՀՀ դրամ
  - 6.5. ԵՊՀ դրամական միջոցների նկատմամբ հաշվարկված և վճարված տոկոսային եկամուտներ-147,370,000 (հարյուր քառասուներեք միլիոն երեք հարյուր յոթանասուն հազար) ՀՀ դրամ
  - 6.6. Բարեգործության նպատակով ստացված եկամուտներ-25,228,000 (քսանհինգ միլիոն երկու հարյուր քսանուրեք հազար) ՀՀ դրամ:
  7. Ֆինանսական տարում օգտագործված դրամական միջոցների ընդհանուր գումարը կազմել է՝ 10,259,136,000 (տասը միլիարդ երկու հարյուր հիսունհինը միլիոն հարյուր երեսունվեց հազար) ՀՀ դրամ, այդ թվում
    - 7.1. Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթական ծրագրերի գծով-7,526,272,000 (յոթ միլիարդ հինգ հարյուր քսանվեց միլիոն երկու հարյուր յոթանասուներկու հազար) ՀՀ դրամ
    - 7.2. Գիտական և գիտատեխնիկական, տեղական և միջազգային համագործակցության դրամաշնորհային ծրագրերի գծով-1,820,137,000 (մեկ միլիարդ ութ հարյուր քսան միլիոն հարյուր երեսուներեք հազար) ՀՀ դրամ
    - 7.3. Վճարովի այլ ծառայությունների գծով-268,962,000 (երկու հարյուր վաթսուներեք միլիոն ինը հարյուր վաթսուներկու հազար) ՀՀ դրամ

- 7.4. Գույքի օտարման գծով-483,954,000 (չորս հարյուր ութսուներեք միլիոն ինը հարյուր հիսունչորս հազար) ՀՀ դրամ
- 7.5. Անհատույց տրամադրված միջոցներ-159,811,000 (մեկ հարյուր հիսունինը միլիոն ութ հարյուր տասնմեկ հազար) ՀՀ դրամ:
8. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը ևս կազմել է՝ 10,259,136,000 (տասը միլիարդ երկու հարյուր հիսունինը միլիոն հարյուր երեսունվեց հազար) ՀՀ դրամ:
9. Ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող կազմակերպությունը՝ «ԹՄ աուդիտ» ՓԲԸ:
10. Կից ներկայացվում է աուդիտորական եզրակացությունը 2 (երկու) թերթից:

«Երևանի պետական համալսարան»

հիմնադրամի ղեկավար

Ա. Հ. Սիմոնյան

Գլխավոր հաշվապահ

Ռ. Գ. Գրիգորյան

Հավելված 3  
ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի  
2016 թ. հունիսի 15-ի նիստում  
ընդունված N 21 որոշման

**«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»**  
**ՀԻՄՆԱԴՐԱՄԻ՝ 2015 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ**  
**ԵՎ ԱՅԴ ԱՄՍԱԹՎԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ**  
**ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

## Բովանդակություն

<b>Անկախ աուդիտորական եզրակացություն</b>	<b>3</b>
<b>Համախմբված ֆինանսական հաշվետվություններ</b>	
Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն	5
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն	6
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն	7
Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն	8
Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	9

## ԱՆԿԱՆ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

*Ներկայացվում է «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին*

Մենք աուդիտի ենք ենթարկել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կից ներկայացված համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը՝ առ 31-ը դեկտեմբերի 2015թ., այդ ամսաթվին ավարտված տարվա համար շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին, սեփական կապիտալում փոփոխությունների մասին և դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունները, ինչպես նաև հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի համառոտ նկարագիրը և այլ բացատրական ծանոթագրությունները:

***Ղեկավարության պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար***  
Հիմնադրամի ղեկավարությունը պատասխանատու է սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար՝ համաձայն ՖՀՄՄ-ների: Ղեկավարությունը պատասխանատու է նաև այնպիսի ներքին վերահսկողության համակարգի համար, որը նրա կարծիքով թույլ կտա կազմել սխալների կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվություններ:

### ***Աուդիտորների պատասխանատվությունը***

Մեր պատասխանատվությունն է անցկացված աուդիտի արդյունքում արտահայտել կարծիք սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Մենք աուդիտն իրականացրինք աուդիտի միջազգային ստանդարտներով: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք հետևենք էթիկայի պահանջներին և աուդիտը պլանավորենք ու իրականացնենք՝ համախմբված ֆինանսական հաշվետվությունները էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ երաշխիք ձեռք բերելու նպատակով:

Աուդիտորական աշխատանքները ներառում են այնպիսի ընթացակարգերի իրականացում, որոնք թույլ են տալիս ձեռք բերել աուդիտորական ապացույցներ համախմբված ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների և բացահայտումների վերաբերյալ: Ընտրված ընթացակարգերը կախված են աուդիտորի դատողությունից և ներառում են նաև այնպիսի էական խեղաթյուրումների ռիսկի գնահատումը, որոնք կարող են պայմանավորված լինել թե խարդախությամբ և թե սխալներով: Այս ռիսկը գնահատելիս աուդիտորը դիտարկում է համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և վերջիններիս ճշմարիտ կերպով ներկայացման համար կիրառվող ներքին վերահսկողության համակարգը, նպատակ ունենալով մշակել այդ հանգամանքներին համապատասխանող աուդիտորական ընթացակարգեր՝ բայց ոչ կարծիք արտահայտել Հիմնադրամի ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև համախմբված ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության համապատասխանության, ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների խելամտության, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:

Մենք գտնում ենք, որ ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

**Կարծիք**

Մեր կարծիքով համախմբված ֆինանսական հաշվետվությունները «Երևանի պետական համալսարան» Հիմնադրամի համախմբված ֆինանսական վիճակի՝ առ 31.12.2015թ., ինչպես նաև այդ ամսաթվի դրությամբ ավարտված տարվա համախմբված ֆինանսական արդյունքների և դրամական հոսքերի մասին տալիս են ճշմարիտ և իրական պատկեր՝ համաձայն ՖՀՄՄ-ների:

**Թաթուլ Մովսիսյան**

Գլխավոր տնօրեն

**Ղուկաս Աթոյան**

Առաջադրանքի ղեկավար

24 մարտի, 2016թ.,

ք.Երևան, Ամիրյան 4/6

**«Երևանի պետական համալսարան» Հիմնադրամի  
Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն  
2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**

<i>ՄԾԾ դրամ</i>	<b>Ծանոթ.</b>	<b>31/12/15</b>	<b>31/12/14</b>
<b>Ակտիվ</b>			
Հիմնական միջոցներ	9	45,625,626	47,546,558
Ոչ նյութական ակտիվներ	10	46,061	50,676
Կենսաբանական ակտիվներ		53	69
Կանխավճար ոչ ընթացիկ ակտիվների համար	11	278,977	81,812
<b>Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ</b>		<b>45,950,717</b>	<b>47,679,115</b>
Պաշարներ	12	140,704	149,627
Կանխավճար պաշարների և ծառայությունների համար	13	5,666	12,763
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	14	1,137,336	446,492
Կանխավճար հարկերի և պարտադիր վճարների գծով	22	4,294	8,172
Ավանդներ	15	307,256	112,131
Դրամական միջոցներ	16	2,901,817	1,957,792
Այլ ընթացիկ ակտիվներ	17	7,313	17,210
<b>Ընդամենը ընթացիկ ակտիվներ</b>		<b>4,504,386</b>	<b>2,704,187</b>
<b>Ընդամենը ակտիվներ</b>		<b>50,455,103</b>	<b>50,383,302</b>
<b>Սեփական կապիտալ և պարտավորություններ</b>			
Զբաղիված շահույթ	18	39,671,696	39,141,376
Պահուստային կապիտալ	18	169,894	169,894
<b>Ընդամենը սեփական կապիտալ</b>		<b>39,841,590</b>	<b>39,311,270</b>
Փոխառություններ		470	470
Հետաձգված հարկային պարտավորություն	30	5,767,022	6,094,284
Ակտիվներին վերաբերող շնորհներ	19	2,489,744	2,505,201
<b>Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ</b>		<b>8,257,236</b>	<b>8,599,955</b>
Առևտրական կրեդիտորական պարտքեր	20	59,478	69,795
Կանխավճար ծառայությունների համար	21	1,263,788	1,523,235
Շահութահարկի գծով պարտավորություն		421,837	79,322
Այլ հարկերի և պարտ.վճարների գծով պարտավորություն	22	166,405	144,204
Աշխատավարձի և այլ կարճ.հատուց-ի գծով պարտ-թյուն	23	206,516	272,780
Եկամուտներին վերաբերող շնորհներ	24	237,058	381,669
Այլ պարտավորություններ	25	1,195	1,072
<b>Ընդամենը ընթացիկ պարտավորություններ</b>		<b>2,356,277</b>	<b>2,472,077</b>
<b>Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ</b>		<b>50,455,103</b>	<b>50,383,302</b>

Ռեկտոր

Ա.Սիմոնյան

Գլխավոր հաշվապահ

Ռ.Գրիգորյան



**«Երևանի պետական համալսարան» Հիմնադրամի  
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին  
համախմբված հաշվետվություն  
2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար**

<i>Միլիոն դրամ</i>	<i>Ծանոթ.</i>	<i>2015</i>	<i>2014</i>
<b>Շարունակական գործունեությունից շահույթ (վնաս)</b>			
Հասույթ	27	8,749,841	8,086,054
Վաճառքի ինքնարժեք	28	(6,773,918)	(6,974,944)
<b>Համախառն շահույթ</b>		<b>1,975,923</b>	<b>1,111,110</b>
Այլ եկամուտներ (ծախսեր)	29	(568,338)	(37,539)
Իրացման ծախսեր		(5,119)	(3,432)
Վարչական ծախսեր		(774,267)	(703,848)
<b>Գործառնական շահույթ</b>		<b>628,199</b>	<b>366,291</b>
Ֆինանսական եկամուտներ		200,896	71,223
Փոխարժեքային տարբերությունից օգուտ (վնաս)		(33,622)	34,514
<b>Շահույթ մինչև հարկումը</b>		<b>795,473</b>	<b>472,028</b>
Շահութահարկի գծով ծախս	30	(265,153)	(152,028)
<b>Զուտ շահույթ</b>		<b>530,320</b>	<b>320,000</b>
<b>Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք</b>		<b>530,320</b>	<b>320,000</b>

Ռեկտոր

Ա.Սիմոնյան

Գլխավոր հաշվապահ

Ռ.Գրիգորյան

**«Երևանի պետական համալսարան» Հիմնադրամի  
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն  
2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար**

ՄԸԸ դրամ

	<b>Ծանոթ</b>	<b>Չբաշխված շահույթ</b>	<b>Պահուս- տային կապիտալ</b>	<b>Ընդամենը</b>
<b>Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2013</b>	<b>18</b>	<b>38,821,376</b>	<b>169,894</b>	<b>38,991,270</b>
Զուտ շահույթ		320,000	-	320,000
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		-	-	-
<i>Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք՝ առանց հարկերի</i>		<i>320,000</i>	<i>-</i>	<i>320,000</i>
<b>Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2014</b>		<b>39,141,376</b>	<b>169,894</b>	<b>39,311,270</b>
Զուտ շահույթ		530,320	-	530,320
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		-	-	-
<i>Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք՝ առանց հարկերի</i>		<i>530,320</i>	<i>-</i>	<i>530,320</i>
<b>Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2015</b>		<b>39,671,696</b>	<b>169,894</b>	<b>39,841,590</b>

Ռեկտոր

Ա. Սիմոնյան

Գլխավոր հաշվապահ

Ռ. Գրիգորյան

*«Երևանի պետական համալսարան» Հիմնադրամի  
Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն  
2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար*

<i>ՕՊՈ ղրամ</i>	<i>Ծանոթ</i>	<i>2015</i>	<i>2014</i>
<b>Գործառնական գործունեությունից դրամական հոսքեր</b>	16		
վաճառքներից		8,496,868	8,048,929
այլ գործունեությունից		1,760,701	2,306,847
նյութերի, ապրանքների ձեռք բերումից		(189,068)	(154,528)
աշխատանքների, ծառայությունների ձեռք բերումից		(775,809)	(673,548)
վճարումներ աշխատակիցներին և նրանց անունից		(7,074,887)	(7,060,097)
շահութահարկ		(249,900)	(150,500)
այլ հարկեր, պարտադիր վճարներ		(441,551)	(119,410)
այլ		(674,400)	(715,488)
<b>Գործառնական գործունեությունից դրամական զուտ հոսքեր</b>		<b>851,954</b>	<b>1,482,205</b>
<b>Ներդրումային գործունեությունից դրամական հոսքեր</b>			
հիմնական միջոցների վաճառքից		1,343,170	1
տոկոսների ստացումից		174,424	69,982
ավանդների տրամադրումից		(520,000)	(120,000)
տրամադրված ավանդների մարումից		320,000	90,000
հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերումից		(1,191,861)	(847,216)
<b>Ներդրումային գործունեությունից դրամական զուտ հոսքեր</b>		<b>125,733</b>	<b>(807,233)</b>
<b>Ֆինանսական գործունեությունից դրամական հոսքեր</b>			
<b>Ֆինանսական գործունեությունից դրամական զուտ հոսքեր</b>		-	-
<b>Ընդամենը դրամական միջոցների զուտ հոսքեր</b>		<b>977,687</b>	<b>674,972</b>
արտարժույթի փոխարժեքային տարբերություններ		(33,662)	33,475
<b>Դրամական միջոցների մնացորդը առ 1 հունվարի</b>		<b>1,957,792</b>	<b>1,249,345</b>
<b>Դրամական միջոցների մնացորդը առ 31 դեկտեմբերի</b>		<b>2,901,817</b>	<b>1,957,792</b>

Ռեկտոր

Ա.Սիմոնյան

Գլխավոր հաշվապահ

Ռ.Գրիգորյան

## **1. Ընդհանուր տեղեկություններ**

«Երևանի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունը հիմնադրվել է 2002թ.-ին: 2014 թ նոյեմբերին ՀՀ կառավարության որոշմամբ վերակազմակերպվել է հիմնադրամի: «Երևանի պետական համալսարան» հիմնադրամը (այսուհետ՝ Հիմնադրամ կամ Կազմակերպություն) «Երևանի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության (պետական գրանցման համարը՝ 273.210.03130) իրավահաջորդն է (փոխանցման ակտին համապատասխան):

Հիմնադրամը կրթական, գիտահետազոտական և մշակութային ինքնավար, բարձրագույն ուսումնական հաստատություն է, որի գործունեությունը նպատակառոտված է հայագիտական, բնագիտական, սոցիալ-տնտեսագիտական, հումանիտար գիտությունների և տեխնիկայի, մշակույթի տարբեր ուղղություններով կրթության, հիմնարար ու կիրառական գիտական հետազոտությունների և ուսումնառության կազմակերպմանը՝ հանրակրթական, միջին մասնագիտական, բարձրագույն մասնագիտական, հետբուհական մասնագիտական և լրացուցիչ կրթության մակարդակներում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված կարգով և կրթական ծրագրերով:

Հիմնադրամի հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է՝ ի դեմս ՀՀ կառավարության: Հայաստանի Հանրապետության անունից հանդես եկող պետական կառավարման լիազոր մարմինը ՀՀ կրթության և գիտության նախարարությունն է:

Հիմնադրամը հաշվետու ամսաթվի դրությամբ ունի

ա) երկու դուստր ընկերություն՝

- «ԵՊՀ հրատարակչություն» ՍՊԸ, և
- «ԵՊՀ երկրաբանական հետազոտությունների կենտրոն» ՍՊԸ:

բ) առանձացված ստորաբաժանում՝

- ԵՊՀ-ի Իջևանի մասնաճյուղ և

Հիմնադրամը չունի ասոցիացված կազմակերպություններ և համատեղ վերահսկվող միավորներ:

Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները ընդգրկում են Հիմնադրամը, իր դուստր ընկերությունները և առանձացված ստորաբաժանումը:

Հիմնադրամի գործունեության հիմնական տեսակները՝

- բարձրագույն, միջին, հետբուհական մասնագիտական, հանրակրթական և լրացուցիչ կրթության կազմակերպում,
- օտարերկրյա դիմորդների նախապատրաստական կրթության կազմակերպում,
- մշակույթի բնագավառում կրթական գործունեության իրականացում,
- գիտամանկավարժական կադրերի պատրաստում, վերապատրաստում, որակավորման բարձրացում,
- գիտահետազոտական, գիտատեխնիկական, արտադրական աշխատանքների իրականացում, դրանց արդյունքների առևտրայնացում,
- խորհրդատվական, փորձագիտական ծառայությունների մատուցում,
- հրատարակչական, տպագրական գործունեության ծավալում և դրա արդյունքների իրացում, գրքերի և այլ տպագրական նյութերի վաճառքի իրականացում,
- իր կողմից հրատարակվող տպագիր և էլեկտրոնային միջոցներով գովազդի իրականացում,
- կրթական և ուսումնական վճարովի դասընթացների կազմակերպում,
- միջազգային ուսումնական և գիտատեխնիկական ծրագրերի իրականացում,
- աշխատողների, սովորողների և այլ անձանց հանրային սննդի, հանգստի, բուժման, կենցաղի կազմակերպում և սպասարկում:

Աշխատակիցների միջին ցուցակային թվաքանակը 2015թ. կազմել է 2,740 անձ և 2014թ.՝ 3,063 անձ:

2015թ դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամն ունի 19 ֆակուլտետ, 4 ուսումնական կենտրոններ, 67 մասնագիտություն, 20,108 ուսանող (ԵՊՀ-ի ուսանողներ՝ 18,416, Իջևանի մասնաճյուղի ուսանողներ՝

1,692), որոնցից 3,157-ի ուսման վարձը լրիվ փոխհատուցվում է պետության կողմից ուսանողական նպաստի ձևով (ԵՊՀ-ի ուսանողներ՝ 2,980, Իջևանի մասնաճյուղի ուսանողներ՝ 177):

Հիմնադրամի իրավաբանական հասցեն է՝ ք.Երևան, Ալեք Մանուկյան 1: Հիմնադրամը, բացի ք.Երևան Ա.Մանուկյան 1 հասցեից, գործունեություն է իրականացնում նաև Աբովյան 52 (Թիվ 8 մասնաշենք), Չարենցի 8 (Թիվ 5 մասնաշենք), Չարենցի 6 (Թիվ 7 մասնաշենք), Կիլյան 1/ա (Քաղ. պաշտպանության մասնաշենք) հասցեներում, ինչպես նաև ք.Իջանում (մ/Ճ), Ծաղկաձորի, Հանքավանի, Բյուրականի ուսումնական բազաներում և Դիլիջանում (ճամբար):

Հիմնադրամի կառավարումը հիմնված է իր ինքնավարության վրա՝ միանձնյա և կոլեգիալ կառավարման սկզբունքների գույակցմամբ, հիմնադրի, լիազոր մարմնի, հոգաբարձուների խորհրդի, գիտական խորհրդի և ռեկտորի գործառույթների իրականացմամբ:

Հիմնադրամի կառավարման մարմիններն են՝

- 1) հոգաբարձուների խորհուրդը.
- 2) կառավարիչը (այսուհետ՝ ռեկտոր):

Հիմնադրամի կառավարման բարձրագույն և հսկողություն իրականացնող մարմինը հոգաբարձուների խորհուրդն է, որի լիազորությունների ժամկետը 5 տարի է: Հոգաբարձուների խորհուրդը ձևավորվում է ԵՊՀ-ի պրոֆեսորադասախոսական կազմի, սովորողների, հիմնադրի և լիազոր մարմնի ներկայացուցիչներից: ԵՊՀ-ի հոգաբարձուների խորհրդի անդամների թիվը 32 է՝

- 8-ը՝ պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներ,
- 8-ը՝ սովորողների ներկայացուցիչներ,
- 8-ը՝ հիմնադրի ներկայացուցիչներ են՝ առաջադրված ՀՀ վարչապետի կողմից պետական պաշտոն զբաղեցնող անձանցից,
- 8-ը՝ լիազոր մարմնի ներկայացուցիչներ են կրթության, գիտության, մշակույթի և տնտեսության տարբեր ոլորտներից:

Հիմնադրամի կառուցվածքային ստորաբաժանումներն են ֆակուլտետները, գիտահետազոտական ինստիտուտները, մասնաճյուղերը, ամբիոնները, կենտրոնները, բաժինները, լաբորատորիաները, գիտական գրադարանը, հրատարակչությունը և այլ ստորաբաժանումներ:

Հիմնադրամի կառուցվածքային ստորաբաժանումների կարգավիճակը, գործառույթները, իրավասությունները սահմանվում են ՀՀ օրենսդրությամբ, Հիմնադրամի կանոնադրությամբ և իրենց կանոնադրություններով:

## **2. ՖՀՄՍ-ներին համապատասխանությունը**

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտներին (ՖՀՄՍ) համապատասխան:

## **3. Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթը**

ՀՀ արժույթը ՀՀ դրամն է, որը Հիմնադրամի ֆունկցիոնալ և ներկայացման արժույթն է:

Ֆինանսական տեղեկատվությունը ցույց է տրված հազար դրամներով՝ առանց ստորակետից հետո տասնորդական նիշի:

## **4. Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի համառոտ նկարագիրը**

### **4.1. Չափման հիմունքները**

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով: Սովորաբար սկզբնական արժեքը հիմնված է ակտիվի դիմաց տրված հատուցման իրական արժեքի վրա:

**4.2. Ֆինանսական հաշվետվությունների կազմը**

Համախմբված ֆինանսական հաշվետվություններում ներառված են՝

ա) ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն՝ ժամանակաշրջանի վերջի դրությամբ: Ընթացիկ և ոչ ընթացիկ ակտիվներն ու պարտավորությունները ներկայացվում են առանձին դասակարգմամբ:

բ) շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին մեկ համախմբված հաշվետվություն՝ տվյալ ժամանակաշրջանի համար: Կազմակերպությունը ներկայացնում է շահույթում կամ վնասում ճանաչված ծախսերի բաժանումը (վերլուծումը)՝ օգտագործելով դրանց գործառույթի վրա հիմնված դասակարգումը:

գ) սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն՝ տվյալ ժամանակաշրջանի համար:

դ) դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն՝ տվյալ ժամանակաշրջանի համար: Գործառնական գործունեությունից առաջացող դրամական միջոցների հոսքերի մասին տեղեկատվությունը ներկայացվում է՝ օգտագործելով ուղղակի մեթոդը: Վճարված սոկոսները դասակարգվում են որպես ֆինանսավորման, ստացված սոկոսներն ու շահաբաժինները՝ որպես ներդրումային գործունեությունից առաջացող դրամական միջոցների հոսքեր: Վճարված հարկերը դասակարգվում են որպես գործառնական գործունեությունից առաջացող դրամական միջոցների հոսքեր:

ե) ծանոթագրություններ, որոնք բաղկացած են հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի համառոտ նկարագրից և այլ բացատրական տեղեկատվությունից:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններում բացահայտվում է ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր գումարների՝ նախորդ ժամանակաշրջանի (նախորդ տարի) համադրելի տեղեկատվությունը: Երբ Կազմակերպությունը իր ֆինանսական հաշվետվություններում փոփոխում է հոդվածների ներկայացումը կամ դասակարգումը, ապա վերադասակարգում է համադրելի գումարները, բացի այն դեպքերից, երբ վերադասակարգումն անիրագործելի է:

**4.3. Համախմբման հիմունքներ**

*Համախմբված ֆինանսական հաշվետվությունների շրջանակը*

Կազմակերպությունը համախմբում է բոլոր դուստր կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունները, որոնք գործում են ինչպես ՀՀ-ում, այնպես էլ արտերկրում:

Դուստր է այն կազմակերպությունը, որը վերահսկվում է Կազմակերպության կողմից: Կազմակերպությունը վերահսկողություն ունի ներդրման օբյեկտի (դուստր կազմակերպության) նկատմամբ, երբ ներդրման օբյեկտում իր ներգրավվածության արդյունքում նա ունի փոփոխական հատույցների իրավունք կամ ռիսկին ենթարկվածություն և ներդրման օբյեկտի նկատմամբ իր իշխանության միջոցով այդ հատույցների վրա ազդելու կարողություն:

*Համախմբման ընթացակարգերը*

Կազմակերպությունը պատրաստում է համախմբված ֆինանսական հաշվետվություններ՝ միանման գործարքների և նույն հանգամանքներում տեղի ունեցող այլ դեպքերի համար օգտագործելով հաշվապահական հաշվառման միօրինակ քաղաքականություն:

Դուստր կազմակերպության համախմբումը սկսվում է նրա նկատմամբ Կազմակերպության (մայր կազմակերպության) կողմից վերահսկողություն ձեռք բերելու ամսաթվից և դադարում է՝ ներդրման օբյեկտի նկատմամբ ներդրողի (մայր կազմակերպության) վերահսկողությունը կորցնելուն պես: Դուստր կազմակերպության եկամուտներն ու ծախսերը հիմնված են լինում ակտիվների և պարտավորությունների՝ ձեռքբերման ամսաթվի դրությամբ մայր կազմակերպության համախմբված ֆինանսական հաշվետվություններում ճանաչված արժեքների վրա:

Չվերահսկող բաժնեմասերը համախմբված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացվում են սեփական կապիտալում՝ մայր կազմակերպության սեփականատերերի սեփական կապիտալից առանձին:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները կազմելիս Կազմակերպության և դուստր կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունները համախմբվում են տող առ տող՝ գումարելով ակտիվների, պարտավորությունների, սեփական կապիտալի, եկամուտների և ծախսերի համապատասխան հոդվածները:

Որպեսզի համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներկայացնեն ֆինանսական տեղեկատվություն խմբի, որպես մեկ կազմակերպության համար, կատարվում են հետևյալ քայլերը՝

- ա) համախմբվում են մայր կազմակերպության և դուստր կազմակերպությունների ակտիվների, պարտավորությունների, սեփական կապիտալի, եկամուտների, ծախսերի և դրամական հոսքերի նմանատիպ հոդվածները.
- բ) հաշվանցվում է (բացառվում է) յուրաքանչյուր դուստր կազմակերպությունում մայր կազմակերպության ներդրման հաշվեկշռային արժեքը և յուրաքանչյուր դուստր կազմակերպության սեփական կապիտալում մայր կազմակերպության բաժինը.
- գ) ամբողջությամբ բացառվում են ներխմբային ակտիվները և պարտավորությունները, սեփական կապիտալը, եկամուտը, ծախսերը և դրամական հոսքերը, որոնք վերաբերում են խմբում ընդգրկված կազմակերպությունների միջև գործարքներին (ներխմբային գործարքներից առաջացող շահույթը կամ վնասը, որը ճանաչվել է ակտիվներում, օրինակ, պաշարներում և հիմնական միջոցներում, բացառվում է ամբողջությամբ):

#### **4.4. Հիմնական միջոցներ**

Հիմնական միջոցի յուրաքանչյուր (հիմնական) բաղկացուցիչ (առանձնացնելի միավոր), որի սկզբնական արժեքը հիմնական միջոցի ամբողջ արժեքում էական է, կամ ունի տնտեսական օգուտների սպառման նշանակալիորեն տարբեր մոդել, կամ ունի նշանակալիորեն տարբեր օգտակար ծառայություն, հաշվառվում է որպես առանձին միավոր:

Կազմակերպությունը հիմնական միջոցի միավորի սկզբնավորման արժեքը բաշխում է ըստ դրա հիմնական բաղադրիչների: Հիմնական միջոցի միավորի հիմնական բաղադրիչները առանձնացնելուց հետո հիմնական միջոցի միավորի մնացած մասը ևս հաշվառվում է որպես հիմնական միջոցի միավորի հիմնական բաղադրիչ (հիմնական միջոցի միավորի մնացորդային հիմնական բաղադրիչ): Որպես հիմնական միջոցի միավորի հիմնական բաղադրիչ առանձին հաշվառվում է նաև հիմնական միջոցի միավորի անսարքությունների առկայության վերաբերյալ կանոնավոր լայնածավալ ստուգումների իրականացման ծախսումները (արժեքը), ինչպես նաև հիմնական միջոցի միավորի կանոնավոր լայնածավալ կապիտալ վերանորոգումների ծախսումները (արժեքը):

Հիմնական միջոցի միավորի հիմնական բաղադրիչները հիմնական միջոցի միավորի կազմում հաշվառվում են առանձին:

##### **Չափումը ճանաչման պահին**

Հիմնական միջոցի միավորը, որը կարող է ճանաչվել որպես ակտիվ, պետք է չափվի իր սկզբնական արժեքով, որը ճանաչման ամսաթվի դրությամբ անհապաղ վճարման գնի համարժեքն է: Երբ վճարումը վճարման նորմալ պայմաններով նախատեսված ժամկետից հետաձգվում է, անհապաղ վճարման գնի համարժեքի և ընդհանուր վճարումների տարբերությունը ճանաչվում է որպես տոկոսային ծախս՝ հետաձգված ժամկետի ընթացքում, բացառությամբ եթե նշված տոկոսային ծախսումը կապիտալացվում է:

Սկզբնական արժեքի տարրերն են, մասնավորապես՝ գնման գինը, ներկրման տուրքերը, չփոխհատուցվող հարկերը և պարտադիր այլ վճարները, ակտիվը համապատասխան վայր հասցնելու և ղեկավարության նախանշած նպատակներով օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ ուղղակիորեն կապված ցանկացած ծախսում: Գործարկման և նման նախաարտադրական ծախսումները հիմնական միջոցների սկզբնական արժեքում չեն ներառվում: Սկզբնական արժեքը որոշելիս առևտրային գեղջերը և արտոնությունները հանվում են:

##### **Չափումը ճանաչումից հետո**

**«Երևանի պետական համալսարան» Հիմնադրամի  
Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ**

Հիմնական միջոցի միավորը՝ որպես ակտիվ ճանաչելուց հետո, հաշվառվում է իր սկզբնական արժեքով (ինքնարժեքով)՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները:

**Մաշվածություն**

Հիմնական միջոցների բոլոր դասերի նկատմամբ կիրառվում է մաշվածության հաշվարկման գծային մեթոդը:

